ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀ-ԲԾ-ԳՀԱՊՁԲ-18/40» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Երևան « 26 » հոկտեմբերի 2018թ.
Ժամը՝ **11** ^{00}

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Մ. Թովմասյան
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Վ. Թովմասյան, Կ. Բզնունի
Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Դ. Նիկողոսյան
Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	Հ. Վարդանյան

Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության վերաբերյալ տեղեկություններ,
- Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ապրանքների ամբողջական նկարագրերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ,
- Հանձնաժողովի ընդունած որոշումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության վերաբերյալ տեղեկություններ

Ընդունել ի գիտություն:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից սույն թվականի հոկտեմբերի 19-ին, կառավարության 2017թ. մայիսի 4-ի № 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Պետական եկամուտների կոմիտեից սույն թվականի հոկտեմբերի 25-ին տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվությունը:

2. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ապրանքների ամբողջական նկարագրերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ

Ընդունել ի գիտություն:

Հանձնաժողովի քարտուղարը սույն թվականի հոկտեմբերի 19-ին, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, ծանուցել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել ապրանքների ամբողջական նկարագրերի վերաբերյալ տեղեկությունները:

Առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը սույն թվականի հոկտեմբերի 20-ին՝ հրավերով սահմանված կարգով ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:.

3. Հանձնաժողովի ընդունած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

3.1. Հանձնաժողովի գնահատող անդամների կողմից իրականացված գնահատումների հիման վրա ՀՀ-ԲԾ-ԳՀԱՊՁԲ-18/40 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին

3.2. Հանձնաժողովի քարտուղարին.
Պայմանագրի կնքման նպատակով «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ, պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջ՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի հավաստումը ընդունված որոշումներին

Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	_____	Մ. Թովմասյան
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	_____	Վ. Թովմասյան
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	_____	Կ. Բզնունի
Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	_____	Դ. Նիկողոսյան
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	_____	Հ. Վարդանյան